Արդ մեր թողեալ զնոսա, հարցցուք զնոսա: Ջրուանն, զոր յառաջ քան զամենայն ինչ ասեն, կատարեալ ոք էր, թէ անկատար: Եթէ ասիցեն՝ եթէ կատարեալ էր, լուսիցեն՝ եթէ կատարեալն յումմէ կարատամայր խնդրել որդի, որ գալլէ և զերկինս և զերկիր առնիցէ. զի եթէ կատարեալ էր, ինքն իսկ կարող էր առնել զերկինս և զերկիր: Ապա եթէ անկատար էր, յայտ է՝ թէ էր ոմն ի վեր քան զնա, որ զնորա թերակատարութիւնն լնուլ կարէր. և եթէ էր ոք ի վեր քան զնա, մմա պարտ էր առնել զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առ ի ցուցանելոյ զիր զբարեբարութիւնն և զաւրութիւն. և ոչ Ջրուանայ որդի շնորհել, որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առնիցէ:

Այլ, ասեն, փառաց առնէր զյաշտն:

Հարցցուք. փառքն յումմեք աշողեալ էին մմա, թէ վասն զի մշտնջենաւոր էր՝ փառաւոր էր: Եթէ յումմեք պարգեւեալ էին մմա փառքն, հարկ է կարծել՝ եթէ էր ոմն ի վեր քան զնա զաւրագոյն և փառաւորագոյն, ուստի ի նա փառքն հասին: Ապա եթէ չէր ոք ի վեր քան զնա, ի զուր էր զյաշտն հազարամեան առնել. զի փառքն ոչ եթէ անձնաւոր ինչ են, այլ ի յաշողութենէ ուրուք անուանին փառք, որպէս ի չաշողութենէ ուրուք անուանի թշուառութիւն. և երկոքին ի դիպաց արգասիք են, ոչ անձանց հաստատութիւնք:

Եւ այլ եւս. զի եթէ արեգակն և լուսին չեւ եւս էին լեալ, որով ժամքն և աւուրք և ամիսք և տարիք կարգին, հազար ամն ուստի երեւէր. զի չէին ի միջի լուսաւորքն, որք զթիւ աւուրք և ամսոց և տարեաց կարգէին. այլ յայտ է՝ թէ անմտութեամբ լի են քաջադանքն:

Դարձեալ թէ երկինք և երկիր և որ ի նոսայն՝ չէին, ո՞ր առնէր զյաշտն կամ իս: Յորժամ երկիր չէր և ոչ տունկք ինչ որ ի մմանէ, զբարսմունսն ուստի գտանէր ունել ի ձեռին.

կամ բնաւ գինչ իսկ յագէր, զի ամատումբ չեւ եւս էին արարեալ: Եւ որ քան զամենայն ամատագոյն է, զհագար ամ, ասեն, յաշտ արար. եւ յետ հագար ամին յերկուացաւ, ասէ՝ թէ լինիցի ինձ որդի Ռամիզդ, եւ եթէ չլինիցի, եւ ի գուր ինչ վաստակիցիմ: Եւ այնու ցուցանէ՝ թէ տկար էր Զրուանն եւ կարատ եւ առանց գիտութեան. եւ պատճառք չարեացն նոյն է, եւ ոչ Արեմն: Զի եթէ նորա չէր յերկուացեալ, որպէս ասենն, Արեմնն ոչ լինէր՝ զոր չարեացն արարիչ համբաւեն. այլ ինքն երկմտեաց, որ անհաւատն է եւ լի անկարգութեամբ:

Զի ոչ երբեք ի միողէ աղբերէ երկու բղխումբ ելանեն, միմն քաղցր եւ միւսն դառն. եւ ոչ ի միողէ ծառոյ երկու պտուղք՝ միմն ամոյշ եւ միմն դաժան: Արդ եթէ քաղցր գիտեն զԶրուանն, ոչ պարտին զդառն պտուղն զԱրեմն ի նմանէ համարել. եւ եթէ դառն հաշուին, չէ պատճառ զքաղցր պտուղն զՌամիզդ ի նմանէ դնել: Եւ ի դէպ ելանէ նոցա աստուծական քարքառն, որ ասէ. կամ արարէք զծառն քաղցր, եւ զպտուղ նորա քաղցր. եւ կամ արարէք զծառն դառն, եւ զպտուղ նորա դառն. զի ի ծառոյ ամտի զպտուղն իւր նամաչի:

Եւ եթէ արարածք յիւրաքանչիւր յարիմնուածս կան, եւ երբեք զսահմանաբն եղելաւք նոցա ոչ անցանեն, հրչափ եւս առաւել Զրուանն՝ եթէ մշտենջենաւոր ոք էր, եւ արարածս առնելոյ հնարս խնդրէր՝ եթէ անձամբ եւ թէ այլով եւ թէ որդուով՝ որպէս ասենն, պարտ էր կարգ ինչ ցուցանել եւ ոչ անկարգութիւն:

Զի ոչ երբեք տեսաք՝ թէ կովք էշս ծնան, եւ էջք եզիմս, եւ ոչ գայլք մաքիս, եւ ոչ մաքիք աղուէս, եւ ոչ առիւծք ձիս, եւ ոչ ձիք աւճս. քայց միայն մի ինչ ծնունդ է՝ զոր մարդիկ հնարեցան արտաքոյ կարգաց բնութեան, ծնուցանել ի ձիոց եւ ի յիշոց ջորիս. եւ նոյնքն անսերմն եւ անծնունդ են. զի ոչ յԱստուծոյ կարգեցան՝ այլ ի մարդկանէ հնարողութենէ: Արդ Զրուանն եթէ արջառ էր, զկարիքն զԱրեմն զհարդ ծնանէր. եւ եթէ գայլ էր, զգառն զՌամիզդ հիմ ծնանէր. ոչ ապաքէն մարդկան մտաց քաջաղանք են:

Refutation of Marcion (Book IV, 1)

Մարկիոն մոլորեալ մութանէ աւտարութիւն ընդդէմ  
աստուծոյն արիմաց, եղեալ ընդ մմա եւ զհիւղն էութեամբ, եւ  
երիս երկինս: Ի միոջն, ասեն, բնական է աւտարն. եւ  
յերկրորդումն արիմացն աստուած. եւ յերրորդումն զաւրբ  
նորա. եւ յերկրի հիւղն, եւ կոչեն զնա զաւրութիւն երկրի:

Եւ այնպէս կարգէ զաշխարհէ եւ զարարածոց, որպէս  
աւրէնքն ասեն: Այլ եւ յաւելու՝ թէ հաղորդութեամբ ընդ  
հիւղեայն արար զամենայն զոր արար. եւ որպէս թէ էգ ոք ինչ  
եւ կին ամուսնութեան էր հիւղն: Եւ յետ առնելոյ զաշխարհս ել  
ինքն զաւրաւքն հանդերձ յերկինս. եւ հիւղն եւ որդիք նորա  
մնացին յերկրի, եւ կալան զիւրաքանչիւր իշխանութիւն, հիւղն  
յերկրի, եւ արիմացն աստուած յերկինս:

Եւ տեսեալ արիմացն աստուծոյ՝ թէ գեղեցիկ է աշխարհս,  
խորհեցաւ առնել ի սմա մարդ: Եւ իջեալ առ հիւղն յերկիր,  
ասէ. տուր ինձ ի կաւոյդ բումէ, եւ յինէն տամ ոգի, եւ  
արասցուք մարդ ըստ նմանութեան մերում: Տուեալ մմա  
հիւղեայն յերկրէ իւրմէ, ստեղծ զնա եւ փչեաց ի նա ոգի, եւ  
եղել Ադամ ի շունչ կենդանի եւ վասն այնորիկ անուանեցաւ  
Ադամ, զի ի կաւոյն արարաւ: Եւ ստեղծեալ զնա եւ զամուսինն  
նորա, եւ եղեալ ի դրախտին՝ որպէս եւ արէնքն ասեն, գային  
համապագ պատուիրեին նմա, եւ ուրախ լինեին ի նմա իբրեւ  
յորդուղ հասարակաց

Եւ տեսեալ, ասէ, աստուծոյն արիմաց որ տէրն էր  
աշխարհի՝ թէ ազնուական է Ադամ եւ արժանի  
սպասաւորութեան, հնարեցաւ՝ եթե զհարդ կարասցէ գողանալ  
զնա ի հիւղեայն, եւ յիւր կողմն միարանել: Առեալ զնա ի մի  
կողմն, ասէ. Ադամ, ես եմ Աստուած եւ չիք այլ ոք. եւ բայց  
յինէն այլ աստուած բեզ մի լիցի. ապա թէ ունիցիս զոք այլ  
աստուածս բայց յինէն, գիտասցիք զի մահու մառանիցիս: Եւ  
իբրեւ ասաց զայս ցնա, եւ յիշատակեաց նմա զանուն մահու,

գահի հարեալ Ադամայ՝ սկսաւ տակաւ զամճն մեկնել ի հիւղեայն:

Յւ եկեալ հիւղեայն՝ պատուիրել մմա ըստ սովորութեանն, տեսանէր՝ զի ոչ անսայր մմա Ադամ, այլ խորհեալ ի քաց մերժէր, եւ չմերձեմայր առ մա: Յայնժամ հիացեալ ի միտս իւր հիւղեայն, իմացաւ՝ թէ տէրն արարածոց մեմգեաց մմա: Ասէ. յակամն աղբերն պղտորեալ է ջուր մորա. զինչ է այս, չեւ եւս քազմացեալ Ադամայ ծմնդովք, եւ գողացաւ զմա անուամբ աստուածութեան իւրոյ յինէն: Որովհետեւ ստեաց զիս եւ ոչ պահեաց ընդ իս զդաշմն, եւ արարից աստուածս քազումս, եւ լցից մոքաւք զաշխարհ գոյի իւրով, զի խնդրիցէ՝ թէ ով իցէ աստուած, եւ ոչ գտանիցի: Եւ արար, ասեմ, կոռոս քազումս եւ անուանեաց զնոսա աստուածս, եւ ելից մոքաւք զաշխարհ: Եւ ընկղմեցաւ անուն աստուծոյ, որ տեառնն արարածոց, ի մէջ անուանց քազում աստուածոց, եւ ոչ ուրեք գտանէր: Եւ մոլորեցաւ ծնունդ մորա մոքաւք, եւ ոչ պաշտէր զմա, զի ձգեաց զամեմեսիմ առ իմքն հիւղն, եւ ոչ ետ թոյլ եւ ոչ միում ի մոցանէ պաշտել զմա: Յայնժամ, ասեմ, քարկացաւ տէրն արարածոց, զի թողիմ զմա եւ անսացիմ հիւղեայն. եւ մի ըստ միոցէ, որ ելանիմ ի մարմնոց իւրեանց, արկանէր զնոսա առ ցասման ի գեհեմ. եւ զԱդամ արկ ի գեհեմ վասն ծառոյն. եւ այնպէս արկաներ գայր ի գեհեմ զամեմեսիմ, մինչիւ ցքսան եւ ինն դար:

Եւ տեսեալ, ասեմ, աստծոյն քարւոյ եւ աւտարի, որ մտէր յերրորդ երկիմս, թէ այնչափ ազգք կորեան եւ տանջեցան ի մէջ երկուց մեմգաւորաց՝ տեառնն արարածոց եւ հիւղեայ, ցաւեաց մմա վասն անկելոցն ի հուր եւ տանջելոց: Առաքեաց զորդի իւր երթալ փրկել զնոսա, եւ առնուլ զմմանութիւն ծառայի, եւ լինել ի կերպարանս մարդոյ ի մէջ որդւոց աստուծոյ աւրիմացն: Բժշկեսչիր, ասէ, զբորոտս մոցա, եւ կեցուսչիր զմեռեալս մոցա, եւ քացչիր զկոյրս մոցա, եւ արասչիր ի մոսա բժշկութիւնս մեծամեծս ձրի. մինչ զի տեսանիցէ գբեզ տէրն արարածոց, եւ մախանձիցի, եւ հանիցէ գբեզ ի խաչ: Եւ ապա ի մեռանելն բում՝ իջցես ի դժոխս, եւ հանցես զնոսա անտի. զի չեմ սովոր դժոխք՝ ընդունել ի միջի իւրեանց զկեանս: Եւ վասն



այնորիկ ելանես ի խաչ, զի նմանեսցիս մեռելոց. եւ քացցէ դժոխականն գրեթամն իւր՝ ընդունել զքեզ. եւ մտցես ի մէջ նորա եւ թափուր արասցես զնա:

Եւ իբրեւ եհան զնա ի խաչ, ասեն, էջ ի դժոխսն, եւ թափուր արար զնա: Եւ հանեալ զոգիսն ի միջոյ նորա, տարաւ յերրորդ երկինսն առ հայրն իւր: Եւ տէրն արարածոց զայրացեալ, առ ցասմանն եցել զպատմութեանն իւր եւ զվարագոյր տաճարին իւրոյ, եւ խաւարեցոյց զարեգակն իւր, եւ զգեցոյց թուխս աշխարհին իւրում, եւ նստաւ ի սուգ առ տրամութեանն:

Ապա երկրորդ անգամ իջեալ Յեսու կերպարանաւք աստուծութեան իւրոյ առ տէրն արարածոց, դներ դատ ընդ նմա վասն մահու իւրոյ: Եւ տեսեալ տեսառն աշխարհի զաստուածութիւնն Յեսուայ, գիտաց՝ թէ գոյ այլ աստուած արտաքոյ քան զնա: Եւ ասէ ցնա Յեսու. դատաստան կայ իմ ընդ քեզ, եւ մի ոք լիցի դատաւոր ի միջի մերում, այլ բո իսկ արեւմբն՝ զոր գրեցեր: Եւ իբրեւ եղին զարեւմսն ի միջի, ասէ ցնա Յեսու. հչ դու գրեցեր յարեւմսդ բում՝ թէ որ սպաննիցէ, մեռցի. եւ որ հեղու զարիւն արդարոյ, հեղցեն զարիւն նորա: Եւ ասէ. այո ես գրեցի: Եւ ասէ ցնա Յեսու. արդ տուր զքեզ ի ճեռս իմ՝ զի սպանից եւ հեղից զարիւն բո, որպէս սպաներն դու զիս եւ հեղեր զարիւն իմ. զի արդար եմ իրաւամբք քան զքեզ, եւ երախտիս մեծամեծս արարի յարարածսն բում: Եւ սկսաւ համարել զերախտիսն, զոր արար յարարածսն նորա:

Եւ իբրեւ ետես տէրն արարածոց՝ թէ յաղթեաց նմա, եւ ոչ գիտէր զինչ խաւսիցի, քանզի յիւրոց արիւնացն պարտաւորեցաւ, եւ չգտանէր տալ պատասխանի, զի եղեւ մահապարտ փոխանակ մահուանն նորա, ապա յողոթս անկեալ աղաչէր զնա՝ թէ փոխանակ զի մեղայ եւ սպանի զքեզ յանգէտս, քանզի ոչ գիտացի՝ թէ աստուած իցես, այլ մարդ համարնի զքեզ, տուեալ քեզ ընդ ալմր վրիժուց՝ զամենեսեան որ կամիցին հաւատալ ի քեզ՝ տանել յո եւ կամիցիս: Ապա թողեալ զնա Յեսուայն՝ յափշտակեաց առ զՊաւղոս, եւ յայտնեաց նմա զգիմսն, եւ

առաքեաց զնա բարոզել՝ թէ գնոց գնեալ եմք մեք. եւ ամենայն  
որ հաւատայ ի Յեսու՝ վաճառեցաւ յարդարոյ անտի բարւոյն:

Այս սկիզբն է աղանդոյն Մարկիոնայ. թող զայլ բազում  
բարմատարսն. եւ զայս ոչ ամենեքին գիտեն, այլ սակաւք ի  
նոցանէ. եւ աւանդեն զուսումնն միմեանց ի բերանոյ, ասեն,  
աւտարին գնովք գնեալ է զմեզ ի տեառնէն արարածոց, եւ թէ  
որպէս կամ իւ գնեալ իցէ, զայն ոչ ամենեքին գիտեն:

*Agai'angelos: St. Gregory destroys pagan temples (§809-815)*

Եւ իբրեւ եկն եհաս ի սահմանս Հայոց՝ լուա Գրիգորիոս, թէ Վահէվանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տաբաւնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկով եւ արծաթով, եւ բազում մուրբ մեծամեծ թագաւորաց ձաւնեալ անդ. ուրիշորդ պաշտամ հռչակաւոր, անուանեալն Վիշապաբաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սմարս լերինն Քարբեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ եւ անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ. Զի յայնժամ դեռ եւս շէն կային երեք բազինք ի մմա. առաջին՝ մեհեանն Վահէվանեան, երկրորդն՝ Ոսկեմար Ոսկեծին դից, եւ բազինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմար դից. եւ երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, Սեմեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս: Արդ՝ դիմեաց գալ սուրբն Գրիգորիոս, զի քանդեսցէ եւ գայն եւս, զի տակաւին իսկ տգէտ մարդիկ խառնակութեան զոհէին յայս բազինս մնացեալս:

Եւ իբրեւ դարձեալ գայր նա ի կողմացն Յունաց՝ բարձեալ քերէր ընդ իւր նշխարս ինչ յոսկերաց մեծի մարգարէին երանեալ մկրտչին Յովհաննու եւ զսուրբ վկային Քրիստոսի զԱթանագինէի: Եւ իբրեւ եկին հասին յանդիման մեհեանացն, մաւտ ի գետն Եփրատ՝ կամէր հանել զմոսսա ի վեր, ի քարճաւանդակ տեղի մեհեանացն, կործանել զբազինսն, եւ շինել զվկայարանս նոցա:

Իբրեւ եկին մաւտ եղեն ի գետն Եփրատ իբրեւ ձիոյ արշաւանաւք երկուք, եւ դեռ ընդ փոքր ձորակ մի անցանել կամէին, ընդ ջուր մի սակաւ՝ զտեղի առին սպիտակ ջորիք կառացն, ուր կային գանձքն աստուածային, նշխարք սրբոցն. ոչ կարացին հանել ըստ ձորակն: Եւ յայտնեալ առ Գրիգոր հրեշտակ Տեառն՝ ասէ. "Հանեցաւ Տէր զքնակել սրբոցդ Աստուծոյ ի տեղւոջդ": Ուր եւ անդէն քաղմութեան զաւրացն, մէն սակաւ սատարեալ՝ շինեցին զվկայարանն, եւ զսուրբսն ի հանգիստ փոխեցին:

Եւ մինչ դեռ զշինուած մատրանն կազմէին՝ հրաման ետ Գրիգոր զարականին եւ իշխանացն որ ընդ իւրն էին, զի ելցեն եւ մրմաւբ տապալեսցեն զշինուածս բազմացն: Որք ելեալ շատ ջանացան, եւ ոչ կարացին զդուռս բազմացն գտանել՝ թէ ի ներքս մտցեն, զի ծածկեցին դեւքն ի նոցանէն. եւ ի կողմանէ արտաքուստ ջանացան, եւ ոչ գծեաց անդ երկաթ գործւոյն. ապա փութացան հասին իշխանքն եւ պատմեցին նմա զամենայն:

Իսկ նա առնոյր զնշան տէրունական խաչին, եւ ելեալ ի ձորակէն եկաց յանդիման բարձրաբերձ տեղեացն շինուածոցն եւ ասէ. "Հրեշտակ քո, Տէր, հալածեսցէ զնոսա": Եւ ընդ բանիցն հոգմ ուժգին րդխեաց ի խաչանիշ փայտէն, զոր ունէր ի ձեռին իւրում սուրբ եպիսկոպոսն: Եւ երթալը հոգմն ուռուցեալ լերինն հաւասար, եւ չոգաւ հարթեաց, տապալեսաց, ընկէց զամենայն շինուածսն բազմացն: Եւ այնչափ կորոյս, զի յետ այնորիկ ոչ ինչ ոք յայնմ տեղւոջ նշմարանս կարէր գտանել, ոչ բարի եւ ոչ փայտի, ոչ ոսկւոյ եւ ոչ արծաթոյ, եւ ոչ քնաւ երեւէր թէ լեալ ինչ իցէ անդ: Եւ անթիւք կոտորեցան մարդիկ պաշտամանն բրմութեան որ ի տեղւոջ անդ էին, եւ անհետ եղեն ոսկերք նոցա. եւ որք տեսինն՝ անթիւ մարդիկ հաւատացին: Եւ ասէ սուրբն Գրիգոր. "Արդ տեսէք, թէ որպէս ջնջեցան գայթակդութիւնքն ձեր, զի եւ չէին իսկ ինչ, այլ ծառայեցէք յայսմհետ տեսոն Աստուծոյ որ արար զերկինս եւ զերկիր":

Եւ յետ այսորիկ ելանէր նա ի տեղիս մեհենացն, եւ ժողովեալ դարձուցանէր զմարդիկ աշխարհին յաստուածապաշտութիւն: Եւ եղ անդ գիւմունս եկեղեցւոյն, եւ ուղղեաց սեղան փառացն Քրիստոսի. զի նախ անդ արար սկիզբն շինելոյ եկեղեցեաց: Եւ ուղղեալ սեղան յանուն սուրբ Երրորդութեանն, եւ կազմեալ աւագան մկրտութեան, նախ զայնոսիկ լուսաւորեաց մկրտութեամբն՝ որ ընդ իւրն էին մեծամեծ նախարարքն, որ ընդ նմայն երթեալ էին ի բաղաբն կեսարացւոց, եւ ապա զգաւառականսն, զքնակիչս երկրին: Աւուրս բսան երեկաւթս առնէր, եւ մկրտէր անդ աւելի բան զինն եւ տասն քիւր մարդկան, եւ կանգնէր սեղան ի վկայարանի

սրբոցն հանգստի գոր շինեացն, եւ մատուցանէր զպատարագն փրկութեան, եւ բաշխէր անդ զմարմին եւ զարիւն կենարարին Քրիստոսի:

Եւ հրամայեաց կատարել անդ ամ յամէ, ի մմին տեղւոջ ժողովեալ ամենեցուն, զյիշատակ սրբոցն, որ աւր եաւթն էր ամսոյն սահմի, զի խնդութեամբ ժողովեալ՝ զաւր տանին խմբեցեն. զի մախ անտի սկիզբն արար շինելոյ զեկեղեցիս: Եւ կացուցանէր քահանայս ի տեղիս տեղիս. եւ ելից զվայրսն եկեղեցւոյ՝ շինելովք եւ քահանայիւք:

*Koriun: Extracts from the Life of Maš'oc'*

Առն զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ եւ փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց անուն, ի Տարանական գաւառէն, ի Հացեկաց գեղէ, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ՝ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց Քագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հազարպետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւմաշ ուրումն: Տեղեկացեալ եւ հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զարականացն, եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց. որով առ ժամայն լուսաւորեալ եւ թեւամուխ միջամուխ յաստուածատուր հրամանացն հանգամանս, եւ ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն:

Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն, եւ առեալ զխաչն պարծանաց, ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն: Եւ հանեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր, եւ անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր. բազում եւ ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց. ամենայն կրթութեամբ հոգեւորացն զանձն տուեալ միաւորութեամբ, լեռնակեցութեան, բաղցի եւ ծարաւոյ եւ բանջարանաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեստ եւ գետնատարած անկողնոց: Եւ բազում անգամ զհեշտական հանգիստ գիշերոյն եւ զհարկ բնոյ՝ յոռմաւոր տքմութեան ի թաւափել ական վնարէր: Եւ զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս, եւ գտեալ եւս զոմանս՝ յինքն յարեցուցանէր աշակերտեալ նմին սովորական աւետարանութեան. եւ այնպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց՝ կամայական բաջութեամբ տարեալ եւ պայծառացեալ, ծանաւական եւ հաճոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան:

Առեալ այնուհետեւ երանելոյն գիւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ եւ յանդարման տեղիս Գողթան: Այլ եւ ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած եւ աստուածասէր, ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի: Իսկ երանելոյն վաղվադակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, եւ ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

Եւ յորժամ ի նոսա զբանն կեանաց սերմանեալ, յայտնի իսկ րնակչաց գաւառին՝ նշանք մեծամեծք երեւէին, կերպակերպ նմանութեամբ դիւացն փախստական լինելով, անկանէին ի կողմանս Մարաց: Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր՝ զհամաշխարհականս սփոփելով. եւ առաւել յազաւթս մշտնջենամոռունչս, եւ քաղկատարած պաղատանս առ Աստուած, եւ արտասուս անդադարս. զմտաւ ածելով զառաքելականն, եւ ասէր հոգալով. "Տրտմութիւն է ինձ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց եւ ազգականաց":

Իսկ իբրեւ ի վերայ հասեալ թէ չեն քաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղորայս եւ զկապս հայերէն լեզույն, մանաւանդ զի եւ նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք եւ յարուցեալք դիպեցան. յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, եւ նմին ելս խնդրէին ժամանակս ինչ: Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ երամանաւ արքայի, եւ միաքանութեամբ սրբոյն Սահակայ, եւ հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր ի հիմեդրորդ ամի Վռամշապիոյ արքային Հայոց, եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուց Ասորոց. որոց առաջինն Նդեսիա կոչի, եւ երկրորդն Ամիդ անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն. որոց առաջնոյն Բաբիլաս անուն եւ երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերականաւքն եւ իշխանաւքն քաղաքին պատահեալ, եւ քաղում

մեծարանց ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի:

Իսկ աշակերտասերն վարդապետին՝ գտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր, եւ զոմանս յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր, եւ նորա իւրովք հաւասարաւք զսովորականն առաջի եղեալ զաղաթս եւ զտքնութիւնս եւ զպաղատանս արտասուալից, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս, յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ՝ "Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես":

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ աւան գտանելոյ: Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի սուրբ աշովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ եւ կարգեալ, յաւրինէր սիդորայիւք եւ կապաւք: Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ աւգմականաւք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոսացոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցւոյն մեծարեալ լինէր: Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հոռփանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրբագոյնսն զկարնն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն, միանգամայն յաւրինեալ եւ յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտաւքն իւրովք. որոյ առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեաց գաւառէն, եւ երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն: Եւ եղեալ սկիզբն նախ յԱռական Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանաթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով եթէ "Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս համեարոյ": Որ եւ գրեցաւ ճեռամբն այնորիկ գրչի. հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան:



Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զհւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել եւ դիւրացուցանել, ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել եւ ի գրել մեծն խառակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն: Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եդեսացոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, եւ երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն ի Կողր գեղջէ, զի յԱսորական քարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց գաւանդութիւնս, Հայերէն գրեալս դարձուցեն:

Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, եւ կատարեալ գիրամանն, եւ առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնային ի կողմանս Յունաց. ուր եւ ուսեալք եւ տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ Հելլենական լեզուին:

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս, դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ եւ Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, եւ երկրորդին Կորիւնս, եւ մատուցեալ յարէին յԵզնիկն, իբրեւ առ ընտանեգոյն սննդակից՝ ի Կոստանդինական քաղաքին, եւ անդ միաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն՝ զԽմդիւրն վճարէին: Որոյ յետ այնորիկ հաստատուն աւրինակաւք աստուածատուր գրոցն, եւ րազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք, եւ Նիկիական եւ Եփեսոսական կանոնաւք գային երեւելով աշխարհին Հայոց, եւ առաջի դնէին հարցն զրեւեալ կտակարանսն եկեղեցոյ սրբոյ:

ԷԿԼԵ: Sasanian oppression in Armenia (from ch. 2)

Եւ յայսր ամենայնի վերայ ալ եւս չարութիւն խորամանկեաց: Զմի ոմն ի հաւատարիմ ծառայիցն իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց՝ որում անունն էր Դէնշապուհ. որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի, զողջոյն քերեալ զմեծ թագաւորին, եւ խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր առնելով ամենայն երկիրն Հայոց ի թողութիւն հարկաց եւ ի թեթեւութիւն ծանրութեան այրելովոյն: Թէպէտ եւ ի վերին երեսս կեղծաւորէր, ալ ի ներքոյ խորհուրդք չարագոյն ցուցանէին:

Առաջին, զազատութիւն եկեղեցւոյ արկաներ ի ծառայութիւն:

Երկրորդ, միայնակեաց բրիստոնեայք որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով արկ:

Երրորդ, զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց:

Չորրորդ, զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմիեանս, եւ յամենայն տան արար խռովութիւն:

Եւ զայս ամենայն առներ՝ զի թերեւս զմիաբանութիւնն բալտեսցէ, եւ զուխտն եկեղեցւոյն ցրուեսցէ, եւ զմիայնակեացսն փախուսցէ, եւ զշինականսն վատնեսցէ. եւ առ յոյժ աղբատութեանն՝ ականայ դիմեսցեն յաւրէնս մոգուց:

Եւ եւս չարագոյն հինգերորդն. բանգի որ հազարապետն էր աշխարհին՝ իրրեւ զհայր վերակացու համարեալ էր աշխարհականացն բրիստոնէից. զրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, եւ համեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, եւ մեւս եւս մոգպետ դատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյ փառս աղաւաղեսցեն:

Բայց սակայն թեպետ եւ ամենայն գործքս այս դժնեայ էին, չեւ էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին. վասն այնորիկ եւ ոչ ոք ընդդիմացաւ նմա, թեպետ եւ էր ծանրութիւն հարկացն: Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնէին եւ առնուին. սոյնպէս եւ եպիսկոպոսաց եւ երիցանց դնէին, ոչ միայն շինաց՝ այլ եւ աւերակաց: Նա թնաւ հվ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից եւ սակից, բաժից եւ հասից, լերանց եւ դաշտաց եւ մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հիմարար յափշտակելով, մինչեւ ինքեանք իսկ մեծապէս զարմանային՝ թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ՝ զի՜նքդ շէն կայցէ աշխարհն Հայաստանեայց:

Եւ իբրեւ տեսին՝ թէ այսու ամենայնիւ չկարացան ձանձրացուցանել, յայնժամ յայտնապէս հրաման ետուն մոզաց եւ մոզպետաց նամակ մի գրել ըստ ձախողակի դեմին իւրեանց. եւ է պատմէն նամակին այս.

“ՄԻՀՐՆԵՐՍԵՀ ՎՁՈՒՐԿ, հրամանատար Երան եւ Անհրան, Հայոց մեծաց ողջոյն շատ”.

Դուք գիտասցիք, ամենայն մարդ՝ որ թնակեալ է ի ներքոյ երկնի, եւ ոչ ունի զաւրէնս դեմի մագդեզն, նա խուլ է եւ կոյր, եւ ի դիւաց Հարամանոյ խաբեալ:

Քանզի մինչ չաւ էին երկինք եւ երկիր, Զրուան մեծն աստուած յաշտ առնէր զհազար ամ՝ եւ ասէր. “Թերեւս լիցի իմ որդի Որմիզդ անուն, արասցէ զերկին եւ զերկիր”: Եւ յղացաւ երկու յորովայնի. մի վասն յաշտ առնելոյ՝ եւ զմեւսն եւս ի թերեւսն ասելոյ: Իբրեւ գիտաց, եթէ երկու են յորովայնիս, “Որ վաղ եկեսցէ, ասէ, նմա տաց զթագաւորութիւնս”:

Իսկ որ էր ի թերահաւատութենէն յղացեալ՝ պատահեաց յորովայնն եւ ել ի դուրս: Ասէ ցնա Զրուան. “Ո՞վ ես դու”: Ասէ. “Որդին քո եմ Որմիզդ”: Ասէ ցնա Զրուան. “Իմ որդին լուսաւոր է եւ անուշահոտ, դու խաւարային ես եւ չարասէր”:

Եւ իբրեւ կարի դառնապէս ելաց, ետ ցնա զքագաւորութիւնն հազար ամ:

Իբրեւ ծնաւ զմեւս եւս որդի, ամուսնեաց զնա Որմիզդ. եհան զքագաւորութիւն յԱրեմնէ, եւ ետ ցորմիզդն, եւ ասէ ցնա. "Յայժմ ես բեզ յաշտ արարի, արդ դու ինձ արա": Եւ Որմիզդ արար զերկինս եւ զարկիր. իսկ Արեմն ընդդէմ չար գործեաց:

Եւ այսպէս բաժանին արարածքս. հրեշտակք՝ Որմիզդի են, իսկ դեւքն Արեմնոյն, եւ ամենայն բարիք որ յերկնից եւ այսր լինի՝ զՈրմիզդի են, եւ ամենայն վնասք որ անտի եւ այսր գործին՝ զայն Արեմն արար: Սոյնպէս յերկինս որ ինչ բարի է՝ զայն Որմիզդն արար, եւ որ ոչն է բարի՝ զայն Արեմն արար. որպէս զմարդ՝ Որմիզդ արար. եւ զախտս եւ զհիւանդութիւնս եւ զմահ՝ Արեմն արար: Եւ ամենայն թշուառութիւնք եւ պատահարք որ լինին, եւ պատեւրագմունք դառնութեան, չարին մասին արարածք են. իսկ յաջողութիւն եւ տէրութիւնք եւ փառք եւ պատիւք եւ առողջութիւնք մարմնոց, զեղեցկութիւնք դիմաց եւ ճարտարութիւնք բանից եւ երկայնակեցութիւնք ամաց, այդ ի բարւոյն առնուն զգոյացութիւն. եւ ամենայն որ ոչ այդպէս է՝ ի նա չարի մասն խառնեալ է:

Եւ ամենայն մարդիկ մոլորեալ են որ ասեն՝ եթէ "Ջմահ Աստուած արար, եւ չար եւ բարի ի մմանէ լինին": Մանաւանդ որպէս բրիստոնեայք ասեն՝ թէ "Աստուած նախանձոտ է. վասն թզի միոյ ուտելոյ ի ծառոյն՝ Աստուած զմահ արար, եւ զմարդն արկ ընդ այնու պատուհասի": Ջաշդպիսի նախանձ եւ ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ Աստուած առ մարդիկ. զի որ զայս ասէ՝ նա խուլ է եւ կոյր, եւ ի դիւաց Հարամանոյ խաքեալ:

Դարձեալ մեւս եւս այլ մոլորութիւն. "Աստուած որ զերկինս եւ զերկիր արար՝ եկն, ասեն, եւ ի կնոջ ումեմնէ ծնաւ՝ որում անուն էր Մարիամ, եւ առն նորա Յովսէփ". այլ ճշմարտութեամբ՝ Բանթուրակայ ուրումն հղեալ նա որդի յանկարգ խառնակութենէ: Եւ զհետ այսպիսի մարդոյ մոլորեալ են րազումք:

Եթէ աշխարհն Հոռոմոց առ յոյժ յիմարութեան տգիտարար մոլորեալ են եւ զրկեալ ի կատարեալ դեմէ մերմէ, յամճանց պայմանն զվսասն իւրեանց. դուք եւս ընդէր զհետ մոլորութեանն ցնորիք: Այլ զոր արեւն տէրս ձեր ունի՝ զնոյն եւ դուք կալարուք. մամաւանդ զի եւ առաջի Աստուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ:

Մի հաւատայք առաջնորդացն ձերոց՝ զոր Նածրացիսդ անուանէք. բանգի յոյժ են խաբերայք. զոր բանիւք ուսուցանեն՝ գործով ոչ առնուն յամճն: "Միս ուտել, ասեն, ոչ են մեղք", եւ ինքեանք ուտել ոչ կամին. "Կին առնել արժան է", բայց ինքեանք եւ հայել ի նա ոչ կամին. "Կարասի որ ժողովէ, ասեն, մեղք են յոյժ", բայց զաղբատութիւն առաւել քան զյոյժ գովեն: Յարգեն զթշուառութիւն, եւ պարսաւեն զյաջողութեամբ. ծաղր առնեն զանուն քախտի, եւ զփառաւորութիւն յոյժ այպանեն. սիրեն զանշքութիւն հանդերձից, եւ յարգեն զանարգս քան զպատուականս. գովեն զմահ՝ եւ պարսաւեն զկեանս. անարգեն զծնունդս մարդոյ, եւ գովեն զանորդութիւն: Եւ եթէ լսէք դոցա եւ ի կամայս ոչ մերձեմայք, աշխարհիդ վախճան վաղվադակի հասանէ:

Այլ եւ ոչ կամեցայ զամենայն ըստ մասանց ընդ գրով արկանել առ ձեզ. զի քաղում այլ ինչ է զոր խաւսին դոքա: Որ չարագոյն եւս է քան զոր գրեցաքդ, զԱստուած ի խաչ ելեալ ի մարդկանէ քարոզեն, եւ զնոյն մեռեալ եւ թաղեալ, եւ ապա յարուցեալ եւ վերացեալ յերկինս: Ոչ ահա ձեզէն իսկ արժան էր անդէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսմանց: Դեւք որ չարք են՝ ոչ ըմբռնին եւ տանջին ի մարդկանէ, թող թէ Աստուած արարիչ ամենայն արարածոց. զոր ձեզ ամաւք է ասել, եւ մեզ կարի անհաւատալի քանք:

Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարէք քան առ քան մամականս պատասխանի, եւ կամ արիք ի Դուռն եկայք, եւ յանդիման լերուք մեծի հրապարակին:

*Movsēs Xorenac'i: The invasion of the Alans and the marriage of Artashēs and Satinik (II 50)*

Ջայսու ժամանակաւ միաբանեալ Ալամբ լեռնականաւոքն  
ամենայնիւ, յինքեանս արկանելով եւ գկէս Վրաց աշխարհին,  
մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ եւ  
Արտաշէս զիւրոյ զաւրացն բազմութիւն, եւ լինի պատերազմ ի  
մէջ երկրիս երկոցունց ազգացն բաջաց եւ աղեղնաւորաց:  
Սակաւ ինչ տեղի տայ ազգ Ալանաց, եւ գնացեալ անցանէ ընդ  
գետն մեծ կուր, եւ բանակի առ եզերք գետոյն ի հիւսիսոյ. եւ  
հասեալ Արտաշիսի բանակի ի հարաւոյ, եւ գետն ընդ մէջ նոցա:

Բայց բանգի զորդի Ալանաց արբային ձերբակալ արարեալ  
զաւրացն Հայոց ածեն առ Արտաշէս, զխաղաղութիւն խնդրէր  
արբայն Ալանաց, տալ Արտաշիսի զինչ եւ խնդրեսցէ. եւ  
երդմունս եւ դաշինս ասէր հաստատել մշտնջենաւորս, որպէս զի  
մի եւս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից ելցեն յաշխարհն  
Հայոց: Եւ ի չառնուլ յանձն Արտաշիսի առ ի տալ զպատանին,  
գայ բոյր պատանւոյն յափն գետոյն ի դարաւանդ մի մեծ, եւ ի  
ձեռն թարգմանչաց ձայնէ ի բանակն Արտաշիսի. Քեզ ասեմ, այր  
բաջ Արտաշէս, որ յաղթեցեր բաջ ազգին Ալանաց. եկ հաւանեաց  
աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ զպատանիդ. զի վասն միոյ  
բինու ոչ է արեւն դիւցազանց զայլոց դիւցազանց զարմից  
բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով եւ ի ստրկաց  
կարգի պահել, եւ թշնամութիւն յաւիտեանական ի մէջ երկոցունց  
ազգաց բաջաց հաստատել: Եւ լուեալ Արտաշիսի զայսպիսի  
իմաստուն բանս, գնաց յեզր գետոյն. եւ տեսեալ զկոյսն  
գեղեցիկ, եւ լուեալ ի նմանէ բանս իմաստութեան, ցանկացաւ  
կուսին: Եւ կոչեցեալ զդայեակն իւր Սմբատ, յայտնէ նմա  
զկամս սրտի իւրոյ, առնուլ զարիորդն ի կնութիւն իւր, եւ  
դաշինս եւ ուխտս հաստատել ընդ ազգի բաջացն, եւ զպատանին  
արձակել ի խաղաղութիւն: Եւ հանոյ թուեցեալ Սմբատայ, առ  
արբայն Ալանաց յղէ՝ տալ զտիկին արիորդն Ալանաց  
զՍաթինիկ ի կնութիւն Արտաշիսի: Եւ ասէ արբայն Ալանաց, եւ  
ուստի տացէ բաջն Արտաշէս հազարս ի հազարաց եւ բերս ի  
բիրոց ընդ բաջազոյ կոյս արիորդիս Ալանաց:

Զայս տեղի առասպելաբանելով վիպասամբն յերգելն իւրեանց ասեն. Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ, եւ համեալ զոսկէաւղ շիկափոկ պարանն, եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն, եւ ձգեալ զոսկէաւղ շիկափոկ պարանն՝ ընկէց ի մէջք աւրիորդին Ալանաց, եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ աւրիորդին, արագ հասուցանելով ի րանակն իւր: Որ եւ ճշմարտութեամբ ունի այսպէս: Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր, լայքա շատ եւ ոսկի րազում տուեալ ի վարձանս, առնու զտիկինն աւրիորդն Սաթինիկ: Այս է ոսկէաւղ շիկափոկ պարանն: Դոյնպէս զհարսանեաց առասպելեալ երգեն, այսպէս ասելով. Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն: Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորաց մերոց, փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել՝ դահեկանս ճապաղել իբրեւ զհիւպատեանն հռովմայեցոց. սապէս եւ թագուհեացն յառագաստին՝ մարգարիտ: Այս է ճշմարտութիւն քանիցս:

Սա առաջին եղեալ ի կանանց Արտաշիսի՝ ծնանի նմա զԱրտաւազդ եւ այլս րազումս, գորս ոչ կարեւոր համարեցաք այժմ անուամբ թուել. քայց զկնիսն յորժամ ի գործ ինչ հասանիցեմք:

## Nunē and the conversion of Georgia (II 86)

Կին ոմն, անուն Նունէ, յընկերաց սրբոց Հռիփսիմեանցն ի  
ցրուելոցն, փախստեամբ հասեալ յաշխարհն Վրաց ի Մծխիթայ,  
ի նոցա քաղաքն նախագահ, յոյժ նգնութեամբ ստացեալ շնորհս  
թշկութեան, որով եւ զբազում անտաժեստս թշկեալ, եւ գլխովին  
զկին Միհրանայ առաջնորդին Վրաց: Վասն որոյ հարցեալ զնա  
Միհրանայ, եթէ որով զաւրութեամբ առնես զայս սքանչելիս,  
ուսաւ զբարոգութիւն անտարանին Քրիստոսի. եւ անորժելով  
լուեալ, պատմեաց իւրոց նախարարացն հանդերձ գովեստիւ:  
Եւ իսկոյն եհաս ի նա լուր սքանչելեացն, որ եղեն ի Հայս ի  
թագաւորն եւ ի նախարարսն, եւ զընկերացն երանելոյն  
Նունեայ. ընդ որ հիացեալ, զրուցեաց երանելոյն Նունեայ,  
որով եւ ստուգագոյն եւս տեղեկացաւ զամենայն ոճով:

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելանել Միհրանայ  
յորսս. մոլորեցաւ ի դժուարս լեռանց խաւարեալ աւդով, այլ ոչ  
տեսանելեալ, ըստ այմ՝ թէ կոչէ զմէզ բարբառով, եւ դարձեալ՝  
թէ գտիւ ի գիշեր մթացուցանէ: Այսպիսի խաւարաւ ըմբռնեալ  
Միհրան, որ եղեւ նմա առիթ մշտնջենաւոր լուսոյն. քանզի  
զարհուրեալ, յիշեաց զոր լուաւ վասն Տրդատայ, եթէ կամեցաւ  
նանապարհորդել յորս, հասին նմա հարուածք ի Տեառնէ. զոր  
համարեցաւ՝ թէ եւ նմա այնպիսի ինչ դիպելոց է: Եւ երկիւղիւ  
մեծաւ պաշարեալ, խնդրեաց աղաւթիւ լուսաւորիլ աւդոյն եւ  
դառնալ խաղաղութեամբ, պաշտել զԱստուածն Նունէի  
խոստանայր, որում հանդիպեալ, կատարեաց զասացեալսն:

Իսկ երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս, յեաց  
առ սուրբն Գրիգոր, եթէ զինչ հրամայեսցէ նմա գործել  
այնուհետեւ. քանզի յաւժարութեամբ ընկալան Վիրք  
զբարոգութիւն անտարանին: Եւ հրաման ընդունի՝ կործանել  
զկուռսն, որպէս ինքն արար, եւ կանգնել զպատուական նշան  
խաչին մինչեւ ցար տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն  
նոցա: Եւ իսկոյն կործանեաց զամպրոպային պատկերն  
Արամազդայ. որ կայր մեկուսի ի քաղաքէն գետոյն հզարի ընդ



մէջ անցանելով. զոր սովոր էին երկրպագել այգուն այգուն ի տանեաց իւրաքանչիւր, զի հանդէպ մոցա երեւէր. իսկ եթէ ոք զոհել կամէր, անցեալ ընդ գետն առաջի մեհենիցն զոհեր:

Բայց ի վերայ մոցա յարեան մախարարք բաղաբին, եթէ զո՞վ արդեւք փոխմանակ կոռցն երկրպագեմք. ուսան՝ եթէ մշանի խաչին Քրիստոսի. զոր արարեալ կանգնեցին ի վերայ վայելուչ բլրոյն յարեւելից կողմանէ բաղաբին, մեկուսի բաժանեալ եւ մա փոքրագոյն գետով: Եւ երկրպագեցին ամենայն բազմութիւնն ընդ առաւաւտն մոյնպէս ի տանեաց իւրաքանչիւր: Բայց յորժամ ելեալ ի բլուրն տեսին փայտ կոփեալ՝ ոչ մարտարաց ինչ գործ, յոլովք բան զսակաւս արեամարեցին, իբր թէ այնպիսեալ լի իցէ ամենայն անտառն մոցա. եւ թողեալ ի բաց գնացին: Իսկ բարեբարին Աստուծոյ մայեցեալ ի գայթակղութիւն մոցա, առաքեաց յերկնից սիւն ամպոյ, եւ լցաւ լեռնն բուրմամբ ամուշահոտութեամբ. եւ ձայն բազմութեան սաղմոսերգուաց լսելի եղեւ. բաղցր յոյժ եւ ծագեաց լոյս տպաւորութեամբ խաչի ըստ ձեւոյ եւ չափոյ փայտեղինին, եւ կալով ի վերայ մորա հանդերձ երկոտասան աստեղաւք. յոր ամենեցուն հաւատացեալ, երկրպագեցին մմա: Եւ յայմ հետէ զաւրութիւնք բժշկութեան կատարէին ի մմանէ:

Իսկ երանելին Նունէ եւ գնաց աշակերտել զայլ եւս գաւառսն Վրաց յանապակ լեզուէն, շրջելով անպանունարար եւ առանց աւելորդաց, ատարացեալ յաշխարհէ եւ որ ի սմա. կամ թէ ճշմարտագոյն ասել՝ ի խաչ ելեալ, ի կրթութիւն մահու զկեանսն առնելով, բանիւ վկայ բանին Աստուծոյ, եւ յաւժարութեամբն իւրով՝ որպէս արեամբ պսակեալ: Զոր համարձակիմք ասել, Առաքելուհի եղեալ, բարոզեաց ի կղարջաց սկսեալ առ դռամբք Աւանաց եւ Կասրից մինչեւ ի սահման Մասքթաց, որպէս ուսուցանէ բեզ Ագաթանգեղոս: Բայց մեք դարձցուք անդրէն ի պատմութիւն Տրդատայ յարձակմանն ի Պարսս:

*P'awstos Buzandac'i*: The apostasy of Meruzan Arcruni (Book IV, 23)

Յայնմ ժամանակի ապստամբեաց յարքայէն Հայոց մի ոմն ի նախարարաց մեծամեծացն, Մերութան անուն Արծրունի. եւ չոգաւ եկաց առաջի Քազաւորին Պարսից Շապիոյ, եւ դնէր ընդ մմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի մմա: Նախ ուրացաւ ի կենացն իւրոց՝ զոր յԱստուածն ունէր. զի եթող զաւրէնս բրիստոնէութեան, եւ խոստովան եղեւ վասն անձին իւրոյ՝ թէ չեմ բրիստոնեայ. եւ կալաւ զաւրէնս մագդեզանցն, այսինքն զմոգուցն. եպագ երկիր արեգական եւ կրակի, եւ խոստովան եղեւ՝ թէ աստուածք այն են՝ զոր Քազաւորն Պարսից պաշտէ: Եղ ուխտ ընդ Շապիոյ արքային Պարսից յայնմ հետէ. թէ իցէ եւ կարասցէ յաղթել Շապուի Հայոց, եւ ունել զաշխարհն, եւ ինձ դարձ լիցի յիմ աշխարհն եւ յիմ տունն, նախ ես՝ աստ՝ շինեցից ատրուշան յիմում տանն սեպհականին, այս ինքն տուն կրակին պաշտելոյ: Եւ կեանս եւ մահ զնէր ընդ նոսա, խոստացեալ բանիւք եւ արդեամբք: Եւ զգաւրսն Պարսից պատրաստէին առաւել եւս բան զառաջինն, եւ առաջնորդ ունէին զչարագործն Մերութանն, ասպատակել յաշխարհն Հայոց: Յանկարծաւրէն այրացաւեր գերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մերութանաւ. զարս տային ի կոխումն փղաց, եւ զկամայս ընդ ցից սայլից հանէին. առնուին կոտորէին զամենայն քնակիչսն վերնագաւառացն Հայոց:

Մինչ դեռ Քազաւորն Արշակ ի կողմանսն ստորին գաւառացն յԱնգեղ տանն էր յուտեստ, զմիջնաշխարհն բանդեալ քրեալ զաւրբն Պարսից ապականէին: Ապա զաւրածողով լինէր Վասակ զաւրավարն Հայոց, եւ որ հասին ի ժամանակի անդ ի ձեռն նորա տասն հազար հեծեալ ընդիր ընդիր եւ բաշ այրեւծի, կազմ գինու եւ քազում պատրաստութեամբ, եւ հանդերձ նոքաւք խաղայր, ի կիրթ ձգեալ հասանէր զաւրացն Պարսից: Իսկ իբրեւ զգացին զաւրավարքն զաւրաց Քազաւորին Պարսից՝ եթէ զաւրածողով է ի վերայ նոցա զաւրավարն Հայոց Վասակ, զմնացորդս աշխարհին գերփեցին գերեցին առին եւ փախեան յաշխարհն իւրեանց մեպով տագնապաւ: Ապա գիտ կրթէր Վասակ Մամիկոնեան, եւ երթայր հասանէր նոցա.

## TEXTS

չուէին ի սահմանս Ատրպատականին: Իսկ զաւրբն թագաւորին Պարսից թողին զգերին, եւ փախստական լինէին հանդերձ Մերութանան: Եւ թափէր անչափ եւ անթիւ զամենայն զառեալ ի գերութիւնն, եւ դառնային խաղաղութեամբ առ թագաւորն Արշակ:

Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զգիւթսն եւ զասեղագէտսն եւ զբաղեայսն. խաւեր ընդ մոսա եւ ասեր՝ եթէ ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, եւ մա համակ անարգեաց զիս: Եւ եղի ընդ մմա ուխտ խաղաղութեան, եւ երդուաւ ինձ յիրեանց արեմս քրիստոնէութեանն ի զխաւորութիւն այնմ՝ զոր աւետարանն կոչեն. մախ այն երդմանն ստեաց: Ես մմա բիր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել մմա, եւ մա ինձ չար ընդ բարւոյ հատոյց: Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեցւոյն Տիսփոնի բաղաբի, եւ կարծեցի թէ մոքա նենգութեամբ ինչ հտուն մմա զերդումն եւ հտուն ինձ ստել: Եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս, իսկ ասաց ցիս Մարի երէց զխաւորն մոցա, ասէին՝ թէ մեք արդարութեամբ տուաք մմա զերդումն. բայց եթէ մա ստեաց, մոյն աւետարանն ածէ զմա առ ոտս ձեր: Եւ ես մոցա ոչ լուայ. եւ հտու հրաման եւթանսուն զնոսա ի մի գուր փողոտել, եւ զուսումնակիցս մոցա համել ընդ սուր: Զաւետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, կապեցի շղթայիւք, եւ կայ ի գանձի իմում: Բայց բանքն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ. եւ յիշեցի զի ասեր՝ թէ մի սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ՝ զի մոյն աւետարանն ածէ զԱրշակ արքայ ի ծունկս բո: Ահաւասիկ բանք արդարութեամբ կատարեցան, զոր ասերն: Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Արեաց՝ զի հտուն ընդ մմա նակատս, եւ յաղթել եւ ոչ մի ամ կարացաք. եւ ելեալ է եկեալ ոտիւք իւրովք: Բայց թէ գիտէի՝ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում եւ ի հնազանդութեան բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանաւք արձակէի զմա խաղաղութեամբ յիր աշխարհն:

Իսկ բաղեայքն հտուն մմա պատասխանի եւ ասեն. Թող մեզ այսաւր, եւ վաղիւն պատասխանի արասցուք բեզ: Իսկ ի վաղիւ անդր ժողովեցան եկին ամենայն բաղեայքն եւ աստեղագէտքն, եւ ասեն ցարբայն. Այժմ զի եկեալ է առ բեզ թագաւորն Հայոց Արշակ, զիմրդ խաւսի ընդ բեզ, կամ զինչ ձայն ածէ, կամ զիմրդ ունի զանձն: Ասէ արքայն. Իբրեւ զմի ի

Ժառանգիցն իմոց համարի զիմքն, հող ոտից իմոց ջանայ լինել: Ասեն մոքա. Առ արա զոր ասեմքս քեզ. պահեա դու զմոսա աստէն, եւ առաքեա դու դեսպանս յերկիրն Հայոց, եւ տուր քերել անտի հող ի սահմանացն Հայոց իրրեւ բեռինս երկուս, եւ կահոյր մի ջուր: Եւ հրաման տացես հարկանել զկէս խորանի յատակ ի քերեալ հողոյն Հայոց. եւ առցես քեզէն զճեռանէ արքային Հայոց Արշակայ, եւ տարցես մախ յայն տեղ՝ որ բնակ իսկ իցէ հողն. եւ հարցցես ցնա բանս: Եւ դարձեալ առցես դու զճեռանէ մորա, եւ տարցես ի հայ յատակսն ի հարեալ հողոյն. եւ լուիցես դու բանս ի մմանէ, եւ ապա գիտասցես դու՝ եթէ կնյ յուխտի բո եւ պահէ զդաշինս բո թէ ոչ՝ յետ արձակելոյ բո զմա ի Հայս: Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, գիտաւջիր՝ զի որ ար հասանէ յերկիրն Հայոց, զմոյն ձայն ածէ ընդ քեզ, եւ զմոյն պատերազմ մորոգէ ընդ քեզ, զմոյն մակատս եւ զմոյն թշմամութիւն յուզէ:

Ապա թագաւորն Պարսից, բանգի զայս լուեալ ի բաւդէիցն, տանիկ ուղտուք արձակէ ի Հայս արս զհողոյ եւ զջրոյ, զի եկեսցեն քերցեն մմա զհմայսն: Եւ ընդ սակաւ աւուրս եկին քերին զայն ինչ, զորմէ յղեացն: Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ՝ զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ի քերեալ հողոյն Հայոց, եւ զջուրն ցանել ի վերայ մորա, եւ զկէսն ի մոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ: Եւ ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով, եւ զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել. եւ զճեռանէ առեալ շրջէր մեմելով:

Եւ երթեւեկս առեալ ընդ խարանն, ասէ ցնա, յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ մեմէին թէ՝ ընդէր եղեր իմ թշմամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս որդի սիրեցի զքեզ, եւ կամեցայ տալ զքեզ զդուստր իմ ի կնութիւն, եւ որդի իմձ առնել զքեզ. իսկ դու յստացար ընդ իս, եւ բովք կամաւք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշմամի. եւ այս լի երեսուն ամ է՝ զի պատերազմեցար ընդ իս:

Ասէ Արշակ արքայ, թէ Մեղայ քեզ եւ յանցեայ. զի ես եկի եւ կոտորեցի, եւ յաղթեցի թշմամեաց բոց. եւ ակն ունէի ի բէն

պարգեւ կենաց, եւ թշնամիք իմ հրապուրեցին զիս, եւ արկին երկիրդուկս ի բէն, եւ փախուցին ի բէն: Եւ երդումն իմ, զոր երդուայ բեզ, յառաջ ած զիս. եւ եկի աւասիկ առաջի բո: Եւ աւասիկ ծառայ բո ի ձեռս բո կամ. զինչ եւ պէտք է բեզ արա զիս, զինչ եւ կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ բո առ բեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ:

Իսկ Շապուի արքայ առեալ զձեռանէ մորա, շրջէր մեմելով, ի չքմեղս առեալ զնա ածէր ի հաշակողմն ի հողն հարեալ յատակն: Իսկ իբրեւ յայն տեղի հասանէր, եւ զհայ զհողն կոխէր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր. սկսանէր խաւսել եւ ասել. Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ տիրացեալ տերանցն բոց. այլ ոչ թողից գբեզ եւ որդւոց բոց զվրէժ մախնեաց իմոց, եւ զմահն Արտեւանայ արքային: Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ:

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զասացեալսն, խոնարհէր բունն հարկանէր զոտից մորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանն: Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել ի հայ հողն, եւս խստագոյն բան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բաիւք յապաշխարութիւն դառնայր: Յայգուէ մինչեւ երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրեւ ի վերայ հարեալ հողոյն տանէր, խստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուն գետնոյն յատակին՝ եւ կայր, ի զղջումն դառնայր:

Իսկ իբրեւ երեկոյ եղեւ ժամ ընթրեաց թագաւորին Պարսից, բանգի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ միմն առ մմա ի մորին տախտին արկանել բազմական, աւրէնք էին՝ զի թագաւորն Պարսից եւ թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին ի միում գահունս: Իսկ այն արք մախ գտող բազմականացն թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց ի մերքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին, ուր զհայ հողն

յատակն հարեալ էր: Նախ ամենեւեման իբրեւ բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ: Արդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի. իսկ յոտն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ. իմ այդ տեղի ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից ի քեմ:

Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից՝ բերել շղթայս եւ արկանել ի պարանոցն Արշակայ եւ յոտս եւ ի ձեռնս մորա երկաթս, եւ խաղացուցանել զնա ի յԱնդմբշն զոր Անուշ բերդն կոչեն, եւ պնդեալ զնա մինչեւ անդէն մեռցի: Եւ եղեւ ի վաղիւ անդր ետ հրաման Շապուհ արքայ՝ ածել զառաջեալ իւր զՎասակ Մամիկոնեան զգաւրավարն սպարապետն Հայոց մեծաց, սկսաւ պատուհասել զնա. բանգի էր Վասակ անձամբ փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շապուհ. Աղուէս, դու էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, եւ զի գործես. զմահ աղուեսու սպանից գբեզ: Իսկ Վասակ տուեալ պատասխանի ասէ. Այժմ թո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առեւծ էի, եւ արդ աղուէս. Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս ի միոյ լերին կայր, եւ միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր. յորժամ յաջ ոտնս յեմուի, զաջ լեռնն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յեմուի, զձախ լեռնն ընդ գետին տանէի: Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ եւ ասէ. Աղէ՛ տուր ինձ գիտել, հվ եմ լերինքն աճողիկ՝ զորս դուն ընդ ունջ տանէիր: Եւ ասէ Վասակ. Լերինքն երկուք, մի դու էիր, եւ մի թագաւորն Յունաց: Այն մինչ տուեալ էր ինձ Աստուծոյ, զքեզ ընդ գետին տանէի եւ զթագաւորն Յունաց, մինչեւ արեւմուտքին հաւրն մերոյ Ներսէսի հանգուցեալ էր ի վերայ մեր, եւ Աստուծոյ զմեզ ի ձեռնանէ չէր թողեալ. մինչեւ զմորա բանն արարաք, եւ խրատ մորա եկաց առ մեզ, գիտացաք տալ քեզ խրատ, մինչեւ մեզէն աչաւք բացաւք անկաւք ի խորխորատ: Արդ զինչ եւ կամիս արա: Ապա ետ հրաման

## TEXTS

Քագաւորն Պարսից մորթել զգաւրավարն Հայոց վասակ, եւ  
զմորթն հանել եւ լնուլ խոտով, եւ տանել ընդ նոյն բերդ  
յԱնդմբշն՝ որ Անյուշն կոչեն, ուր արգելին իսկ զՔագաւորն  
Արշակ:



The destruction of the ecclesiastical institutions established by the patriarch Nersēs (Book V, 31)

Իսկ թագաւորն Հայոց Պապ, թէպէտ եւ սպան զհայրապետն աշխարհին Հայոց զՆերսէս, սակայն ոչ յագեցաւ մահուամբ մորա, ալ ջանայր ալսպէս՝ թէ զինչ միանգամ կարգք իցեն ուղղութեան ի Ներսիսէ եղեալ յեկեղեցւոյն՝ եղծեսցէ եւ խանգարեսցէ: Եւ սկսաւ նախանձ վարել ընդդէմ յառաջագոյն կանոնելոցն ի նմանէ. եւ սկսաւ հրաման տալ յայտնապէս յաշխարհին աւերել զայրեւոցսն եւ զորբանոցսն՝ զոր շինեալ էր Ներսէս ի գաւառս գաւառս, եւ աւերել զկուսաստանսն ի գաւառս գաւառս եւ յաւանս յաւանս պարսպեալս եւ ամրացեալս, որ մօրին Ներսիսի էր շինեալ: Փանգի յիրում կենդանութեան երանելւոյն Ներսիսի էր շինեալ. շինեաց զայս կուսաստանս յամենայն գաւառս, զի որ միանգամ կուսամբ եւ հաւատացեալք իցեն՝ անդր ժողովեսցին ի պահս եւ յաղաթս, եւ կերակրել յաշխարհէ եւ յիրաքանչիւր ընտանեաց: Զայն աւերել հրամայէր Պապ թագաւորն, եւ զկուսանսն հաւատացեալս տայր հրաման ի խառնակութիւն պղծութեան:

Եւ յամենայն աւանս էր շինեալ մօրին Ներսիսի եւ հիւանդանոցս, յամենայն կողմանց եւ ռոնիկս եւ դարմանս կարգեալս, եւ արս հաւատարիմս թողեալ տեսուչս հիւանդացն եւ աղքատացն. մոյմպէս եւ այնոցիկ յամձն արարեալ որք երկիւղածք էին յԱստուծոյ, որք դատաստանացն յաւիտենականացն եւ զալստեանն Քրիստոսի սպասէին: Զվերակացունսն հալածէր թագաւորն յիրաքանչիւր տեսչութենէ, եւ զտեղիսն ի քաց աւերէր: Զոր վերակացունսն կարգեալ էր յաղագս չբաւորացն եւ աղքատաց տեսուչ, զնոսա ի քաց հալածէր. եւ հրաման տայր ամենայն աշխարհի իշխանութեանն իւրոյ. Աղբատրն քայց եթէ ի մոյր կլցեն. ալ անդր ոք ինչ մի իշխեսցէ տանել, եթէ ոչ մոքա եկեսցեն ժտեսցեն աղաչեսցեն, ապա թէ գտանել հազիւ ինչ կարասցեն: Եւ զկարգս պտղոյն եւ զտասանորդացն՝ որ ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի ոք տացէ:

Եւ յաւուրսն Ներսիսի հայրապետի ոչ ոք իշխեր ի նմանէ հանել կամ թողուլ զկին իւր զամուսին յամենայն երկիրն Հայոց, զոր միանգամ բաւողով կամ պսակաւ հարսանեացն արեւմուտեամբ առեալ էր. եւ ոչ այլ առնել միսամգամ իշխեր ոք համարձակել: Եթէ յանկարծ մեռանէր ոք, ոչ ոք իշխեր անյուսութեամբ արտաքոյ կարգի կանոնի եկեղեցւոյ լալ զմեռեալն. եւ ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս մեռելոյն, եւ ոչ ձայնս ոք արկանէր ի վերայ մեռելոյն յաւուրսն Ներսիսի. այլ լոկ արտասուաւք եւ ըստ արժանի սաղմոսիւք եւ արեւմուտեամբ, կանթեղաւք եւ մոմեղինաւք լուցելովք զմեռեալսն յուղարկէին: Իսկ յետ մահուան նորա այնուհետեւ ամենայն մարդ առին հրաման համարձակութեամբ ի թագաւորէն, թողուլ զկանայս զամուսինս իւրեանց. էր զի մի այր տասն կին փոխէր. եւ առ հասարակ յանարեւմութիւն դարձան միանգամայն: Ապա յետ մահուան Ներսիսի յորժամ զմեռեալսն լային, փողովք եւ փանդաւք եւ վնաւք զկոծսն պարուցն կաքաւելով, զտիգսն հատեալս, զերեսս պատառեալս, արք եւ կանայք պղծութեամբ միադութեամբ պարուք դէմ ընդդէմ հարկանելով, եւ կամ ափս հարկանելով, զմեռեալսն յուղարկէին:

Իսկ յամսն Ներսիսի զաղբատս բնաւ ամենեւին ի մոյր ոչ տեսանէր ընդ ամենայն սահմանսն Հայոք. այլ անդէն ի հանգստեան նոցին, այս ինքն յարկանոցսն, ամենայն մարդիկ տանէին զամենայն պիտոյս նոցա. անդէն իսկ անկարատ յամենայն ումեք լցեալ էին: Իսկ յետ մահուն բահանայապետին թէ առնէր որ հանգիստ աղբատացն, մեծ պատիժս կրէր ի թագաւորէն:

Իսկ յաւուրսն Ներսիսի ընդ ամենայն երկիրն Հայոց կարգք պաշտաման եկեղեցւոյն մեծապէս պայծառացեալ էր, եւ րազմութիւն սրբոց պաշտաւնէիցն կանոնելոցն: Եւ յիշատակ սրբոց վկայից յաւուրս նորա յամենայն տեղիս Հայոց մեծախումբ ժողովովք համապազ պայծառանային, եւ պատիւ հարցն եպիսկոպոսաց յամենայն գաւառս Հայոց յաճախէր ըստ արժանի իւրեանց. եւ կարգք վանականաց եւ ի շէնս եւ յամշէնս

առ հասարակ ծաղկեալ: Այլ ամենայն եղծեալ ապականեցաւ խանգարեցաւ յետ մահուան մորա:

Իսկ յաւուրս քահանայապետութեան Ներսիսի ամենայն գաւառք Հայոց յամենայն ի շէնս եւ ի գեղոս յամենայն կողմանս Հայոց առ հասարակ ի հրամանէ քահանայապետին էին շինեալ աւտարատունք հիւանդանոցք աւտարանոցք. եւ ամենայն մարդիկք երկրին Հայոց էին պտղաբերք եւ ողորմածք առ ի յիշել զաղբատս եւ զմեղեալս, զտառապեալս եւ զաւտարս, զհարստահրս, զմշղեհս, զպանդուխտս, զհիւրս, զանցաւորս. եւ էր մոցա կարգեալ վերակացոյս սրբոյն Ներսիսի, եւ դարմանս ի տեղեաց տեղեաց: Իսկ յետ մահու մորա աւերեաց զայն ամենայն թագաւորն Պապ, եւ անարգեաց զպատիւ եկեղեցւոյ, եւ քաղում ինչ կարգ եւ կանոնաց ուղղութեան յարինուածոց՝ զոր եղ հայրապետն Ներսէս, եւ անցեալ դարձեալ ի մոռացումս զամենայն կարգեալն տապալէր: Յետ մորա ելիցն յաշխարհէս քաղում գաւառք Հայոց եւ քաղում մարդիկ ի հնութիւն դիւապաշտութեան դարձան եւ ընդ քաղում տեղիս Հայոց կուռս կանգնեցին ի համարձակութենէ թագաւորին Պապայ. զի ոչ գոյր յանդիմանիչ, եւ ոչ ոք էր այն՝ յորմէ խիթային. զինչ եւ կամէին գործել, համարձակութեամբ գործէին. քաղումք պատկերս կանգնեալ՝ երկիր պագանէին:

Եւ եհատ եւս յարքունիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծան Փրիգորիւ քահանայապետի ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի յեւթն հոգոյն զհինգն հատանէր յարքունիս, եւ զերկուսն միայն թողոյր, երկուս հողս: Եւ ըստ հոգոյն թողոյր երկուս երկուս առ գեղ մի երէց եւ սարկաւագ, եւ զայն՝ սպասու կացուցանէր յիւր ի ծատայութեան զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւագացն: Զի մմա աշպէս թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեճուկս Ներսիս առնիցէ ի կենդանեաց առ մեռեալս, վասն թշնամութեանն զոր ունէր ընդ մմա: Եւ զայն ոչ ածէր զմտաւ՝ թէ զանճն կորուսանէ: Եւ ի ժամանակին մուագէին ամանայն կարգք եկեղեցւոյ պաշտամանն սպասուցն յամենայն երկիրն Հայոց:

## Vocabulary

### Armenian - English

This vocabulary contains all the words in the preceding passages for reading plus all the additional words and forms in Meillet's *Wörterverzeichnis*.\* But this is not a complete dictionary, and for many words only those particular meanings which they have in these texts are listed. For further reading a more comprehensive dictionary will be necessary. For a few nouns and adjectives only the nominative case is given: such words are rarely, if ever, found in a declined form other than the nom. or acc. plural.

#### ա

աբբա	abba (Aramaic for "father")
Աբիաթար	Abiathar
Ագաթանգեղոս	Agathangelos
ագանիմ, ագայ	to dress (oneself), put on; lodge, spend the night
Ադամ, -այ	Adam
ազատ, -աց	free, independent, noble; vast
ազատանամ, -ացայ	to be free, delivered, saved; to be ennobled
ազատանի, -ոյ	the nobility, aristocracy; freemen (collective form)
ազատեմ, -եցի	to free, save; to emancipate; to exempt
ազատեցուցանեմ, -ուցի	to free, etc.
ազատորեար, -ոյ	the freemen; the nobility (col- lective form: ազատ + որեար)

---

\* M, pp. 144-212.

VOCABULARY  
Armenian - English

ազատութիւն, -եան	freedom
ազգ, -աց	people, nation, tribe, family
ազգական, -աց	kinsman
ազգի, ազգի	various
ազդըր, ազդեր	leg; back, shoulder
ազն, ազին, ազինք, ազանց	nation, people; kind, species
ազնիւ, ազնուի, -աց	noble, fine
ազնուական, -աց	noble, fine
Աթինք, Աթինաց	Athens
Աթինացի, -ւոց	Athenian
աթոռ, -ոց	chair; throne
Ածդահակ	Azhdahak
Ալան, -աց	Alan
ալիւր, ալիւր	grain, meal
ախորժեմ, -եցի	to like, to find pleasing
ախոյեան, -եմից	champion
ախտ, -ից	illness, disease
ախտաժէտ, -աց	sick, ill
ածեմ, ածի	to lead, conduct, bring
ակամայ	unwillingly
-ական	adjective suffix, e.g.
	<b>պատուական</b>
ականեմ, -եցի	to look (at), see
ականի, -ւոց	one who has eyes; seeing
ականջալուր	one who has heard with his
	own ears (ականջ + լուր)
ականջք, ականջաց	ears (plural of ունկն)
ակն, ական	eye (N.pl. աչք); spring, source
	(N.pl. ակունք); precious
	stone, gem (N.pl. ականք)
ակն ունիմ	await, hope for, count on
ահ, -ից	fear, awe; գահի հարկանիմ I
	am fear-stricken
ահա (interjection)	behold! lo!
ահագին, ահագնի, -ից	fearful

# VOCABULARY

## Armenian - English

ահարկու, -աց	fearful
ահաւադիկ (interjection)	behold (ահա + աւադիկ)
ահաւանիկ	"
ահաւասիկ	"
ահեղ, -ից	terrible, terrifying, fearsome
աղ, -ից	salt
աղագաւ, յաղագս (with Gen.)	on account of, because of; for the sake of, concerning
աղախին, աղախնոյ	maid-servant
N.pl. աղախնայք	
աղաղակեմ, -եցի	to shout, cry
աղամ, -ացի	mill, grind
աղանդ, -ոց	sect
աղաչեմ, -եցի	to beg, implore, supplicate, entreat
աղաւաղեմ, -եցի	to corrupt, tarnish, spoil
աղաւթեմ, -եցի	to pray
աղաւթք, աղաւթից (pl. noun)	prayer
	յաղաւթս կամ, pray
աղաւնեակ, -եկի	dove, pigeon
աղաւնի, -եաց	dove, pigeon
աղբեր, աղբեր	spring, fountain, source
աղեղն, աղեղան	bow
աղեղնաւոր, -աց	archer
աղետք, աղետից	misfortune, misery; compas- sion, pity
աղերս, -ի, -իւ	prayer, supplication, request; աղերսալից praying (cf. -լից)
աղէ (interjection)	ho!: ho there!
աղի, -ւոց	salty
աղի, -ից	baggage, equipment; suite, train
աղիսմաղի, -ի	wares, baggage
աղուէս, աղուեսու	fox
աղջաղջ	shadow, obscurity

VOCABULARY  
Armenian - English

աղջամուղջ, աղջամղջի	shadows, darkness, obscurity
աղջիկ, աղջկան, աղջկունք	girl
աղջկորդի	son, illegitimate son (աղջիկ + որդի)
աղտբ, աղտից	ordure, dung; soil
աղտաղտիմ	dirty
աղտաղտուկ, -ոյ	dirty
աղտեւր, աղտեր	morass, marsh, swamp
Աղփէ, Աղփեայ	Alpheos
աղքատ, -աց	poor
աղքատութիւն, -եան	poverty
ամեմ, -եցի	to wax, increase, grow
ամ, -աց	year; ամ յամէ yearly
աման, -աց	vase, pot, vessel
ամաչեմ, -եցի	to be ashamed, confounded (cf. ամաւթ-)
ամառն, ամառայնոյ	summer
ամառանոց, -աց	summer-dwelling
ամաւթ, -ոյ	shame
ամբառնամ, ամբարձի	to lift up, raise; arise, climb (aor. ամբարձայ)
ամբաստանեմ, -եցի	to accuse
ամբաստանութիւն, -եան	accusation
ամբարտաւանիմ, -եցայ	to be proud, haughty
ամբոյս, -ից	crowd, host, multitude; tumult
ամեմ-	all, every (as first member of a compound)
ամեմագէտ	all-wise, all-knowing, omni- scient (ամեմ + գէտ)
ամեմակեցոյց	who gives life to all
ամեմայն, -ից	all, every
(pl. ամեմեքեան, ամեմեքիմ)	
ամեմաշիջոյց	which extinguishes everything (cf. շիջուցանեմ)
ամեմաշնորհող	all-merciful

VOCABULARY  
Armenian - English

ամենեւին (adv.)	completely, entirely, absolutely
ամենեքեան	all (N. pl. of ամենայն)
ամենեքին	all (N. pl. of ամենայն)
ամէն	amen
ամիս, ամսոյ, ամսեան	month
ամուսին, ամուսնոյ, ամուսնի	spouse
ամուսնանամ, -ուցի	to marry
ամուսնացուցանեմ, -ուցի	to marry off, give in marriage
ամուսնութիւն, -եան	marriage
ամպ, -ոց	cloud
ամպրոպային	thundering
ամրանամ, -ացայ	to be fortified (from ամուր, -ոց firm, fortified)
այ (interjection)	Oh!
այգ, -ու	morning, dawn; յայգուէ at dawn, in the morning
այգում	at dawn; այգում այգում every day at dawn
այգեստան, -աց	vineyard
այգի, -եաց	vine, vineyard
այդ (demonstrative)	that
այդր	there
այդրէն	in that same place
այժմ	now (այս + ժամ)
այժմիկ	now
այլ (also այդ) այլոց	other
այլագգի, -եաց	foreign, strange
այլակերպ, -ից or -աց	who has another form
այլալեմ, -եցի	to alter, change
այլուստ	from another place
այլուր	somewhere else
այծ, -ից	goat
այծեամն, այծեման	kid, gazelle
այն (demonstrative)	that
այնուհետեւ	hereafter, after that, thereafter



VOCABULARY  
Armenian - English

այնչափ	so much (cf. չափ)
այնպես	thus (cf. -պես)
այնպիսի, -եաց	such a
այո	yes
ալպամեն, ալպամեցի	to mock at
ալպն	derision, scorn, mockery;
	ալպն առնմն to deride
այս, (demonstrative)	this
այս, -ոց	evil spirit, demon
այսահաբ	possessed (by demons), mad
	(cf. հարկամեն, հարի)
այսահարիմ, -եցալ	to be possessed
այսաւր	today
այսինքն, այս ինքն, այսինքն է	that is, <i>id est</i>
այսուհետեւ	from now on, henceforth
	(այսու + հետեւ)
այսչափ	so much (cf. չափ)
այսպէս	thus, in this way (cf. -պէս)
այսպիսի, -եաց	of this kind, such
այսր	here, to this place
այսրէն	in this same place
այտի	from there (where you are)
այտնում, այտեալ	to swell, be bloated
այր, առն	man
